ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հունիսի 2025 թվականի №-Ա

ԲԱՑԱՌԱՊԵՍ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի №141-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 46.1-ին կետը, №3 հավելվածի 5-րդ կետը և հաշվի առնելով «ԱՐԱՐԱՏ ՔԵՆԻՆԳ ՖԵՔԹԸՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի մայիսի 26-ի, 29-ի և հունիսի 4-ի գրությունները՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 10-ի «ԱՐԱՐԱՏ ՔԵՆԻՆԳ ՖԵՔԹԸՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արարատ քենինգ ֆեքթըրի» արևային էլեկտրակայանում բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №141-Ա որոշումը՝ այդ որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի արտադրության ԼԷ№0779 լիցենզիայով ամրագրված՝ «Արարատ քենինգ ֆեքթըրի» արևային էլեկտրակայանի կառուցման պարտավորության կատարման հիմքով:

2. Սահմանել, որ «ԱՐԱՐԱՏ ՔԵՆԻՆԳ ՖԵՔԹԸՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արարատ քենինգ ֆեքթըրի» արևային

էլեկտրակայանում էլեկտրական էներգիան (հզորությունը) կարող է արտադրել բացառապես սեփական կարիքների համար:

3. «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2024 թվականի փետրվարի 13-ի №O.AB.100.12CIB.PIED.0.2602.24 գրությամբ ներկայացված և 2024 թվականի ապրիլի 9-ի №O.AB.100.12CIB.PIED.0.6329.24 փոփոխված բանկային երաշխիքի համաձայն Հանձնաժողովի առջև ստանձնած երաշխիքային պարտավորությունից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունիսի 12-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- հունիսի 2025թ.